№ 4 ԱՊՐԻԼ 1898

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՒՂԲԻՒՐ .№ 4

Դաշտում մնացած մարդոց երևիաներ (պատկեր)։ *Առաւօտ։ Որսորդն ու կաքաւը* (առակ) Լ.։ *Ապրիլի թիթեռնիկ մը* (Անգլերէնէ) Յ. Թ. Գալեան։ *Փոքրիկ աղջկայ դասական առարկանները*—Սոֆիա Տէր-Ստեփանեան։ *Մանկական օրերը* (ոտանաւոր). Կ Կ. Մելիք-Շահնազարեանց։ *Հէօն-Կայար* (Հայկական աւանդութիւն)—Սէյան։ *Մանկական հանգոյցներ* (պատկեր)։ *Հրաւէր գարնան* (ոտանաւոր)—Ս. Սափարեանց։ *Մի կտոր թղթի պատմութիւնը*. Թարգմ. Ղ. Տէր-Գրիգորեան։ *Անտիլական ծուտիկներ* (պատկեր)։

Տեղագրական նամականի

Վայոց ձոր. ԺԲ. Յ. Աբեղայ Տէր-Աւետիքեան։

Ջ ւ ա r ճ ա լ ի f

Հանելուկներ, առաջարկութիւններ, բացատրութիւններ։

Յայտարարութիւններ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Աղբիւրի *ներկայ* 1898 *թ. բաժանորդագրութիւնը չարունակւում է։ Նոր բաժանորդը կըստանայ առաջին №-ից և պրէմիա՝ ալբոմ ամենայն։ Տարեկան գինը 3 ր.* (*արտասահման 4 ր.*) *պրէմիայով 4 ր.* (*արտասահման 5 ր.*)։

Տարագի *յունուար և փետրուար ամիսների №№-ը սպառուած են։ Բաժանորդագրութիւնը ընդունւում է 10 ամսայ համար 5 ր. պրէմիայով* (*Հայրենասէր Իֆիգենիա*) 6 ր.

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ կամ *Tiflis* (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.



Փաշտամ մնացած մայրոս երեխաներ

ԳԱՐԱԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
եւ յաւելած դաստիարակների համար
XVI ՏԱՐԻ № 4 ԱՊՐԻԼ 1898 Թ.

ԱՌԱԻՕՏ

Արեգակը նայում է լուսամուտի միջով։ Թռչուն-

նաեւ էլ գազաններն էլ զոհ են կանչում. մրջիւնը քարշում է իր բեռը. մեղուն ծաղիկներից հիւթ է հաւաքում։ Դաշտը պայծառ է, մարգագետինը ուրախ. անտառն էլ զարթնել է եւ աղ-

Ժուկ բարձրացրել: Միայն ծույլ երեխան է շարունակ քնել:

ՈՐՍՈՐԴՆ ՈՒ ԿԱՔԱՒԸ

—

(Առակ)

—

Մարի-կաքաւը անտառից դէպի դաշտ թռչելիս պատահեց որսորդին:

—Սիրելի որսորդ, ասաց կաքաւը, Աստուած սիրես, ձագերիս չըսպանես. նրանք այս անտառի բոլոր թռչուններից ամենից սիրուն թռչուններն են:

—Շատ բարի, կաքաւ-մարիկ, պատասխանեց որսորդը. եթէ այդ սիրուն ձագերդ պատահեն ինձ, ես նրանց կըխնայեմ, ձեռը չեմ տալ:

Մարի-կաքաւը՝ որսորդի խոստումից միամըտաած, հանգիստ սրտով թռաւ դնաց իր բանին: Բայց երեկոյեան տուն վերադառնալիս ի՛նչ տեսաւ խեղճ մայրը. որսորդը մաղախի մէջ դրած տանում էր փոքրիկ կաքաւներին—նրա սիրասուն, աչքի լոյս ձագերին:

—Ա՛խ, ա՛նխիղճ որսորդ,—ասաց մորմոքած սրտով կաքաւը,—չէ՞ որ դու խոստացար իմ ձագերիս խնայել. ինչու՞ տւածդ խօսքը չըպահեցիր, ինչո՞ւ սպանեցիր ձագերիս: Ամո՛թ քեզ, ստախօ՛ս մարդ:

—Բայց մարի-կաքաւ, պատասխանեց որսորդը, չէ՞ որ դու ասացիր, թէ քո ձագերն այս անտառի մէջ եղած բոլոր թռչուններից ամենից սիրուններն են, մինչդեռ իմ սպանածներս, ինչպէս դու էլ տեսնում ես, այս տգեղ ու մոխրագոյն թռչուններն են:

—Ա՛հ, բացագանչեց այն ժամանակ որդեկորոյս մայրը,—միթէ դու չըգիտե՞ս, որ մի մօր համար ամենից սիրունը և ամենքից դուրեկանն իր հարազատ զաւակներն են...

Լ.

ԱՊՐԻԼԻ ԹԻԹԵՌՆԻԿ ՄԸ

Մանկապարտիզի երգ

(Անգլիերեն)

Իրուն չիմար թիթեռնիկ,
Դուն ինս ինչ ունիս.
Լաւ էր երէ ապաւէիր
Միւչեւ գար չունիս.
Փայլ չունիս քո կերպասներ
Գոնէ մայիսդ չուտ հասներ:

Պիտի սառին այդ աղուր
Ոտքեր ու ևուրբ քիր.
Գոնէ մարմինդ փաթթէիր
Փափկիկ վերմակիդ.
Ա՛խ, այս ո՛րչափ ցուրտ է դեռ,
Վախնամ մեռնիս, խեղճ թիթեռ:

Ց. Թ. ԴԱՅԱՆԱՆ

ՓՈՔՐԻԿ ԱՂՋԿԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

—

Որքիկ ու սիրունիկ դրասեղանի վրայ դրած էին՝ գրիչ մատիտ, թուղթ և ուրիշ դասական առարկաներ. մի անկիւնում կուչ էր եկել թանաքամանը: Այդ բոլոր առարկաները չատ դժգոհ էին իրանց բախտից:

—Ո՛հ, ի՛նչ տանջանք է,—լացակումած ձայնով ասաց թուղթը.—էլ ի՛նչ ասես, որ չեն անում ինձ. պատառոտում են, կեղտոտում թանաքով, ճանկռոտելով ինչ որ բան են ձգմզում ինձ վրայ. գրիչը տանում ու բերում են մի ծայրից միւսը, բայց բոլորովին անօգուտ: Մի խօսքով՝ այնպէ՛ս անախորժ է: Չըգիտես, ե՞րբ կը-վերջանայ այդ բոլորը: Իսկ այդ բոլորի պատճառը ասելի ստոպատեայ գրիչն է:

—Հաւատացնում եմ քեզ, սիրելի թուղթ, այստեղ ես ոչ մի բանում մեղաւոր չեմ,—պատասխանեց գրիչը:

—Խնդրում եմ, մի՛ արդարանալ,—հակաճառեց Թուղթը, երբ ինձ վրայ գրում էր ուրիշ գրիչ, այն ժամանակ չոկ բան էր. նա զգուշութեամբ սահում էր իմ թերթերի վրայով, մի ծայրից միւսը, և ինչքա՜ն խելացի գրիչ էր նա, որ գեղեցիկ տառեր էին դուրս գալիս նրանից. իսկ դու ի՞նչի նման ես, տգէտ մրոտոց: Մի նայի՛ր, տես,—քո անչնորհքութեան պատճառով իմ թերթիկները կեղտոտ ցանցի են նմանւում. երբէք չեն կարողանում բժշկւել վէրքերից,—և դրգռւած Թուղթն այնպէս սուր կերպով ճչաց, որ անկիւնում մրափող հաստավիզ Թանաքամանը արթնացաւ:

Պողպատեայ գրիչը բնականից չատ անզգայ և տառնարիւն է. այդ պատճառով ո՛չ միայն չըվախեց, այլև չըբարկացաւ, միայն մի քիչ հեռացաւ իր չար դրացուհուց:

—Ես էլ եմ լսում, որ մի ժամանակ լաւ, հարթ թղթի հետ բարեկամ էի, և երբէք չէինք կռւում,—ասաց գրիչը. մենք գոհ էին միմեանցից և որքա՜ն հրապուրիչ դրոյցներ, հրաշալի հեքեաթներ գրի անցկացրինք, իսկ այժմ Թանաքման կոչւած ճահճի մէջ ժանգոտում ու մեռնում եմ տխրութիւնից. այդ բաւական չէ՛, դեռ հայհոյում էլ են ինձ:

—Ի՞նչ լի՞նչ. Փչաց Թանաքամանը. դու ինձ ճահի՛ճ անւանեցիր. կարծում ես չլսե՞մ. դիտե՞ս դու, լիրբ դրիչ—ես ո՞րքան դրիչներ եմ տեսել բայց քեզ նման վատին դեռ չեմ հանդիպել. քո անմաքրութեան չնորհով Թանաքը իմ մէջ կարծես տիղմ է դառնում, և ո՛չ մի դրիչ ինձ այնպէս չէր կեղտոտում, ինչպէս դու:

Այս նոր թշնամու հալածանքը համբերութիւնից հանեց դրչին: Զընայած իր ամուր կազմւածքին և հանդիստ տրամադրութեանը, նա չըկարողացաւ տանել այդ վիրաւորանքը և պատրաստւեց յարձակւելու:

—Զըլինի մեր բոլոր թշւառութիւնների պատճառը դրիչն է,—անվստահ կերպով ասաց ռետինը:

—Ի հա՛րկէ, ի հա՛րկէ, ամեն բանում նա՛ է մեղաւորը,—բարկացած պատասխանեց նրա մօտ գտնւող գիրքը. նոյն իսկ ինձ հանդիստ չըթողեց նա,—ամբողջովին ճանկռոտեց և կեղտոտեց:

Գրքի սուր ձայնը խլացրեց թղթի ճչոցը, Թանաքամանի փչոցը և պողպատեայ գրչի վրնգոցը:

—Ես էլ ո՛չ մի կանոնաւոր գործ չեմ կատարում և չատ վատ եմ կառավարւում, թէև

անծանօթ եմ գրչին,—աղաղակեց մատիտը. առաջ գեղեցիկ գծագրում էի, իսկ այժմ մոռացել եմ. իմ գործը հիմա այն է, որ իբր թէ ամեն րոպէ ինձ կարդի են բերում, կտրտում անօգուտ. այ, ո՞րքան փոքրացել եմ:

Գանգատներ և մեղադրանքներ էր, որ թափւում էին ամեն կողմից. աղաղակ, ճիչ, աղմուկ աւելի և աւելի սաստկացան: Թուղթը փսփսում էր, մատիտն ու գրիչը գլորւում էին յետ ու առաջ, ռետինը ցատկոտում էր, գիրքը ուռեցնում էր թերթերը, միայն թանաքամանն էր լռիկ յուզւում,—նա չատ ծանրաշարժ էր:

Գրասեղանը այդ խառնակութիւնից չըգիտէր ի՛նչ անել:

Մի կոպիտ ձայն վերջ տւեց վէճերին. այդ մի հին, մեծ գրչահատ էր, որ պատահմամբ ընկել էր սեղանի վրայ:

—Հանդարտւեցէ՛ք, լռեցէք,—հրամայողական ձևով ասաց նա:—Տիրուհի՛ թուղթ, այդպէս չար մի՛ լինիլ, դեռ չքննած և ճշմարտութիւնը չիմացած՝ մի՛ բարկանալ. դու, քաջարի գրիչ փոխիր քո տրամադրութիւնը դէպի լաւը. իսկ դու, սիրելի թանաքան, այդպէս չուտ մի՛ վիրաւորւիլ: Ես բոլորը կըբացատրիմ ձեզ: Դուք բոլորդ անիրաւացի էք. մեղադրում միմեանց

ձեր կրած անախորժութիւնների համար։ Այս բոլոր թղթերը առաջ պատկանում էին ներկայ տիրուհու մեծ քրոջը։ Նա հիանալի ձեռք ունէր։ Ֆեզ, պողպատեայ դրիչ, կառավարում էր նրա եղբօր ձեռքը, որ շատ խելացի և կըրթւած մարդ էր։ Յարդելի թանաքամանը առաջ մլչտ գտնւում էր բարի հօրաքրոջ սեղանի վրայ. մատիտը նկարում էր նկարիչ հօրեղբօր ձեռքում։ Իսկ այժմ դուք բոլորդ պատկանում և գտնւում էք Հռիփսիկի ձեռքի տակ, որ նախկին տէրերի մէկի քոյրն է, սիւսի—եղբօր աղջիկը։ Ձեր բոլոր անախորժութիւնների պատճառը նրա անվարժ, ծոյլ մատիկներն են։ Բայց մի քիչ համբերեցէ՛ք, ներողամիտ եղէ՛ք, դէպի փոքրերը, վնաս չէք ունենալ։ Ես շատ վաղուց ծառայութեան մէջ եմ և լաւ եմ ճանաչում փոքրերին. շատ ու շատ ծոյլեր և թերեւամիտներ եմ տեսել, որոնք ուղղել են այն պատճառով, որ ղգացել են իրանց պակասութիւնները։ Հռիփսիկը լաւ աղջիկ է—և չատով կըհասկանայ, որ առանց համբերութեան և ուշադրութեան՝ ոչ մի աշխատանք չի յաջողւում։

Գրչատուփը լռեց. կռւողները դադարեցին, և դրասեղանի վրայ տիրեց լռութիւն։

Հռիփսիկը, որ լսել էր այդ բոլոր խօսակ-

ցուքիւնը, սաստիկ ամաչեց իր անկարգ ու ծոյլ լինելուց: Հին գրչահատի բարի խօսքերը նրան խրախուսեցին : Նա սկսեց հետևել ինքն իրան, խնայող և ուշադիր դառաւ. չանսիրութեամբ սովորեց գրել, նկարել և չէր ձանձրանում՝ վչացած կամ անաչող նկարածն ու գրածը կարգի բերելու և ուղղելու:

Փիչ ժամանակից յետոյ նրան պատկանող այդ դասական առարկաները .կրկին խօսակցութիւն ունեցան, և երևաց, որ բոլորն էլ չատ գոհ էին մխիթանցից և իրանց ճակատագրից:

ՍՈՓԻԱ ՏԻՐ-ՈՍԵՓԱՆԵՆ



ՄԱՆԿԱԿԱՆ ՕՐԵՐ

—

Անցան օրեր իմ մանկութեան,
Բոլորեցաւ եօթը տարիս,
Քա՛նի հոգսեր, քանի ցաւեր
Պատճառեցի ծնողներիս—
Մինչդեռ մանուկ ես անհանգիստ
Լացում էի օրօրոցում,
Իմ ծնողներ մնարիս մօտ
Հսկում էին գիշերն ի բուն.
Երբ ես քաղցած լացում էի
Կամ թէ ծարաւն ինձ տանջում էր,
Մայրս իսկոյն ինձ տալիս էր
Անուշ կաթով ջուխտ տիւնքեր.
Ծծում էի անյագաբար,
Փակում աչերս, քնով անցնում,
Բայց դեռ երկար քաղցր ձայնով
Մայրս օրօր էր երգում:
Նա երգում էր ինձ մաղթելով—

Երջանկութիւն, արև, բախտ, փառք.
Նա խնդրում էր առողջութիւն,
Քաղցրիկ օրեր և երկար կեանք։
Եւ երբ նորից զարթնում էի,
Պլչում նրան իմ աչիկները,
Ահա խակոյն ջերմ համբոյրները
Ծածկում էին իմ զոյգ այտեր։
Ախ որչափ սէր, քանի գգւանք
Իմ ծնողները թափում էին,
Երբ մանկական իմ թոթովանք
Մերթ լսում էր ականջներին։
Խլում էին ինձ ձեռից ձեռ,
Գրկում չալկում, զարճացնում,
Բայց ես անխօս միայն թաթերս
Էլ նրանց պարզեցնում։
Այսպէս սնայ ու մեծացայ,
Մինչև հասաւ եօթը տարիս,
Ուր, տէր, Աստուած, տո՛ւր երկար կեանք՝
Որ չատ սիրեմ ծնողներիս։

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՉԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ԼԷՕՆ—ԿԸՑՄԸ

(Չայկական աւանդութիւն)

XII

Էօն ստացաւ մի շքեղ սենեակ իշխանավայել բոլոր յարմարութիւններով։ Կերակուրն ստանում էր իշխանի սեղանից, մի ծեր գինուոր էլ ծառայում էր նրան։ Ուսումնատենչ պատանին չէր հիանում կերակուրներով և ճոխ զգեստներով՝ որ մեծավաւառ բարեբարն էր շնորհում, նրա իդէալն էր գիտութիւնը։ Նա իբրև ուսանող, շուտով սիրւեցաւ և ծանրագլուխ փիլիսոփաներից. յառաջադէմ պատանուն նոյնչափ ընտանեցաւ յունարէնը՝ որչափ իշխում էր նա մայրենի հարազատ լեզուին։ Նա մինչև ւէս գիշեր նստած էր լինում փոքրիկ գրասեղանի կողքին, մայրաքաղաքի յարաճուն ուրախու–

թեան, շուայլ տեսարանների աղմուկները չէին հասնում նրա ականջին, նա խոսում էր յայտնի փիլիսոփաների, մեծ բանաստեղծների հատորների հետ. մթթէ դրանից լաւ ընկեր, քաղցր, անաչառ խոսող ուսուցիչ ու բարեկամ կարող էր գտնել դեղխուրթեամբ փչացած մայրաքաղաքի մթնոլորտում:

Անցան տարիներ, Լէօն լուռ ու մունջ, յարատև աչալրջութեամբ, յամառ ու տոկուն շարունակում էր ուսումն, նրա իդէալն էր փիլիսոփայի մեծ տիտղոսը... Նրա ուսուցիչներն ու ծանօթներն հիացած էին նրանով, իշխանը ծաճուկ հետամուտ էր, լսում ու տեսնում էր, բայց՝ ոչինչ չէր յայտնում, հաղիւ թէ շաբաթը մի անգամ կանչէր իր մօտ...

—Լէօն, խիստ անհնատուր ես լինում ուսման,—ասում էր իշխանը ժպտալով,—դու ճշմարիտ ուսանող ես և մարմնանաճ տիպար, սակայն՝ վատ չի լինիլ, բարեկամ, եթէ մի քիչ զբօսնես, թատրոն գնաս...

—Զբօսնում եմ, մեծ իշխան,—պատասխանում էր նա,—շատ եմ թափառում աւերակների մէջ, լսում եմ այնտեղ ընկած քաջերի արկածներ:

—Չա՛, կարդում ես, գիտեմ...

—Պատմութեան թատրոն եմ յաճախում, լայնածաւալ բեմի վրայ՝ իրենց բոլոր լաւ ու վատ խաղերով...

—Մենամոլութեանդ մասին չեմ վիճում, պատանի դու, սակայն հոգ տար առողջութեանդ: Մտաւորական դասակարգութիւնն ու կրթութիւնն՝ առանց ֆիզիքական մարզանքի քեզ կրջլատեն, կխոտոր կրթողնեն փառքի տաճարին առաջ... Եթէ բազմակարօտ հոյրենիքիդ ուխտել ես օգտակար լինել, քեզանից կազմել նրա փառքի մի բեկորը, նաև զինուորական մարզանք սկսիր:

Լէօն ընկճուեցաւ, համոզուեցաւ, մենամոլութեան օձիքը թողեց. պարապ ժամերին սրով ու վահանով յայտնուում էր փորձ զինուորների սրահում...

—Չա՛, այդպէս,—ասում էր իշխանը,—ղէնքն ու գրիչն

եղբայր են. մին առանց միւսին ուժեղ չէ: Ջէնքն առանց գրչի, գրիչն առանց զէնքի՝ քեզ կըշինեն կամ մի յիմար Հերոս, կամ ծիւրաձ գիտնական, մինչդեռ երկուսն ի միասին մի պողպատաշէն ախոյեան:

XIII

Քաղաքական հանգամանքների բերմունքն ստիպեց Լէօնին մի տարի շատ նեղութիւն կրել: Մեռաւ յունաց Հայկազուն կայսրը, գահն յափշտակուեցաւ մի յայտնի գօրապետից, որի առաջին գործն եղաւ Հայերին հալածել: Յանկարծ Լէօնի բարերար արքայազն Իշխանն անհետացաւ Հորիզոնից. նա բանտ նստեց, հալածուեցան բոլոր աչքի ընկնող Հայերն, ուստի Լէօն ստիպուեցաւ թէ ապրելու և թէ ուսումը շարունակելու միջոցներ Հայթհայթել: Ի բնէ վարժ լինելով նաև կոպիտ աշխատութեան, յօժարակամ ընտրեց նա ծովափում վաճառական նաւերի մէջ աշխատել, իբրեն մի կտոր Հացի գին ճարել. ինչպէս անխռով նստում էր Իշխանական ապարանքում, նոյնպէս անփոյթ այժմ կծկւում էր մի խուլ անկիւն ու շարունակում: Նա այժմ ուրիշ Հոգ չունէր, բացի Հայրենիքի բախտի մասին մտածելուց: Հայ Իշխանների, ի մասնաւորի իր բարերարի կալանաւորութիւնը ծանրապէս ճնշում էր նրա սիրտը: Նա ի սրտէ յուզւում էր Հայ մարդուն եղած անարգանքին Հանդէպ, նա տեսնում էր թէ ինչպէս յոյն մեծամեծներ անարգաբար չարչարում, տանջում, ստրկաբար ծառայութիւններ էին անել տալիս մայրաքաղաքի բնակիչ Հայերին:

Նա մի օր ակամայից եղաւ Հետևեալ անարգ տեսարանին: Մի յոյն Իշխան ծակել տալով մի տախտակ՝ մի առյգ Հայի վիզն էր անցկացրել, ինքն այդ տախտակի վրայ բազմած, անբախտ բեռնակրի գլխին վրայ մուրճով ընկուզ էր կոտրում և ուտելով փողոցները շրջում: Լէօնի աչքերն արիւնակալեցան, բարկութիւնից ատամները կափկափելով,— այս ինչ եմ տեսնում,—մրմռաց նա,—եթէ ես այս լրբենի յոյնին չըՀատուցանեմ, ես Հայ չեմ լինիլ...

Յոյն իշխանն իր բանաւոր հեծեալով դէպի Այ—Ստեփանոս էր գնում: Նա դուրս գալով, այժմեան Ծոի — Գուլէի դրնից՝ մշակւած արտերի միջով յառաջանում էր, ոտներով հայի կողերին խթելով:

—Անարդ կենդանի,—ասում էր գոռոզ ձայնը, —շտապիր քանի մուխը չէ ընկած, եթէ ոչ՝ Սքանչելագործը վկայ, մարմինդ շներին կերակուր կըտամ...

—Յաճ արի դրա ուսից,—յանկարծ առաջը կտրելով ասաց Լէօն,—անմիտ կենդանի դու, ինչպէս համարձակւում ես քո նմանին իբրև դրաստ գործածել:

Յոյնը սարսափեցաւ. երիտասարդն ականթօթափել նրա վզակապից սեղմելով խլեց, նետեց գետին. իշխանը փուեցաւ ոսոխի ոտքերին տակ:

—Ներէ մորթազերծ կանեմ, ապիրատ,—գոչեց նա:

Հայը՝ որ դրաստի պաշտօն էր վարում, դողահար մի կողմ կանգնեցաւ, իսկ Լէօն ոտքը յոյնի կրծքին դրած՝ ասում էր.

—Վերջին րոպէդ է, անզգամ, ասա ինչո՞ւ ես չարչարում այդ հային, ինչ յանդգնութիւն է վրին նստել, գլխին վրայ ընկուզ կոտրել, անլուր տանջանք պատճառել:

—Ես կայսեր ազգականն եմ.—մրմռաց յոյնը խռպոտ ձայնով:

—Պրանով չես արդարանում: Մի՛թէ դա անասունից էլ վատթար է:

—Այո՛,որովհետև հայ է,—ասաց շնչասպառ, երկիւղից դողալով:

—Լաւ ուրեմն՝ իմացի՛ր, ես քեզ պիտի սպանէի. բայց՝ խօսքերիդ համար որոշումս փոխեցի՝ կամենալով ցոյց տալ թէ որքան բարձր է ամենայետին հայն անգամ՝ քեզ նման անասնաբարոյ իշխանից: Անասունից վատթար անւանած հայդ, որի վրին դու յանդգնած ես նստել, որը կարող է արևդ խաւարացնել, մի թեթև ոտքի հարւածով ճղմել քեզ՝ ինչպէս ոջլունի, քեզ ազատ եմ թողնում որ գիտենաս և հաւատաս՝ թէ յետին հայն իսկ գերազանց է յոյն իշխանից... Բայց որ-

պէսզի յիմարաբար, կամ յանկարծ գոռոզութեամբ չըկարծես թէ երկչոտում եմ քեզանից, ահա ձախ աչքդ կըպոկեմ իր բնից...

Այս ասելն ու կատարելը մին եղաւ. Լէօն մատով փորեց նրա աչքը, և դառնալով հային՝ խստիւ հրամայեց հեռանալ...

XIV

Այս արկածը մեծ իրարանցում պատճառեց Կ. Պոլսում: Ձատ որոնեցին վրիժառու հային, բայց գտնել չըկարողացան, որովհետև՝ միջահասակ ու դեղեցիկ հերոսը, յոյնից նկարագրըւած էր ահագնատեսիլ մի հսկայ:

Լէօնի ուսուցչապետը մի ծերունի աթենացի էր, միայն նա էր՝ որ առանց արհամարանքի էր վերաբերւում դէպի հայ ուսանողը. մի օր իր մօտ կանչելով ասաց.

—Լէ՛օն, Հանդէսի օրերը մօտենում են, որդեակ, և դու լիովին ուսումդ ստացար: Չիմա Հայերի համար ժամանակը վատ է, այս կայսեր օրով չէ կարելի լայն ասպարէզ երևակայել, քեզ համար դառն պատրանք միայն կայ... Բայց՝ ես սիրելով քեզ, ուզում եմ ըստ կարելոյն օգնել, ուրեմն պատրաստւիր վերջնական քննութեան, գոնէ յաջողացնեմ քեզ շնորհել փիլիսոփայի տիտղոսը:

—Ե՛ս, ուսուցիչդ իմ,—պատասխանեց հայորդին,—միայն այդ տիտղոսն եմ որոնում, ասպարէզ՝ իմ հայրենիքն է...

—Ես պիտի աշխատեմ:

Հանդէսներն սկսեցան: Լէօնի բոլոր ընկերները կոկիկ ու մաքուր հագւած, մէկը միւսի յետևից ամբիոն էին բարձրանում, իրենց ճարտարախօսութեամբ ունկնդիրներին հիացնում, որոնց մէջ էր և բռնակալ կայսրն իր շքախմբով ու պալատականներով:

Բայց՝ Լէօնի արտաքինն անմխիթար էր. մի մաշւած, ծւառւած քեհեզ պարեգօտ ունէր հագին, ոտները տրեխներ ապիտակ գուլպաներով, մազերի սև ու յորդ ալիքը թէպէտ

յարդարուած, առանց անուշահոտ օծանելիքի: Ինքն արևակէզ լինելով՝ աւելի մի բեռնակիր էր քան ուսանող, բայց՝ մի շնորհալի վեհուրթիւն կար թէ նրա կերպարանքի և թէ շարժումների մէջ. մի րոպէ նրան ուշադիր քննողը կարծում էր ցեխի մէջ ընկած ոսկի տեսնել: Նա սրտատրոփ սպասում էր իր հերթին, որ խօսի, յուզէ մտքերն ու զգացումները, ցոյց տայ իր բազմադիմի գիտուրթեան մի փոքր նշանը:

Չատ չանցաւ, հերթը հասաւ: Նա դողդոջ քայլերով ամբիոն բարձրացաւ, բայց մի րոպէ սարսռեցաւ: Թէատրի մէջ տեղը, գահի վրայ բազմած էր խստահայեաց կայսրն Բիւզանդիոնի. նրա մօտ գուռզ կայսրուհին, իշխաններ, իշխանուհիներ, իսկ նրանց շուրջն անհամար բազմուրթիւն. այդ բոլորի աչքերը, սրամուխ տէգերի պէս, սևեռած էին իր վրայ: Քրտինքն հոսեց նրա ճակատից, բայց՝ իսկոյն ինքն իրեն ամփոփեց իրեն յատուկ սառնուրթեամբ և սկսեց խօսել:

Ի՞նչ այնտեղ չէինք, որ լսէինք նրա խօսքը, կամ գիտենայինք թէ ինչ նիւթի վրայ խօսեցաւ, աւանդուրթեամբ պատմողներն ոչինչ ասած չեն այդ մասին. բայց՝ կասենք, որ Լէօն ընդհանուր յարգանք գրաւեց, մինչև անգամ անմիտ կայսրն անկարող եղաւ իր հիացումը զսպել: Իր մօտ կանչեց գիտնական երիտասարդին, գիտուրթեան առաջին պսակը տալով,—

—Ա՛վ և ինչ որ ես,—ասաց,—աղքա՛տ ուսանող, ստացար առաջին յաղթանակն ու փիլիսոփայի փառքը...

Ձորս կողմից ուրախաձայն զիքo (կէցցէ) բառը թռաւ:

—Արժանի է,—լսեցաւ ամբոխից:

XV

Լէօն յուզած, բերկրած իր ձեռք բերած բարոյական մեծ յաղթանակով, վարձատրուած իր ներքին դատաւորից, ամենաերջանիկ մարդու նման՝ այդ օրը մինչև երեկոյ, մտախոհ իր ոսկեզօծ յոյսերով՝ թափառեցաւ քաղաքում: Ո՛չ քաղց էր զգում և ոչ ծարաւ. նա յագեցած, լիացած էր ամեն բանով:

Ներքին ուրախութիւնն երկնից արքայութեան ճառագայթն է, ճշմարիտ ուրախութեան երէց որպու, բերկրանքի, խնճոյքն աննիւթ խորհիկներից է պատրաստում, Հոգին նւազում է, Հոգին կայտառում է, Հոգին սլանում է Հոգմերի թեւերով, մարմինն իր ընկերի երջանիկ յաւիտանութեամբ համակուած, ստէպ իր երկրային կոչումն էլ է մոռանում: Լէօն այսպէս իր փառքովն արբշիռ՝ գիշերւայ մի մասն էլ ծուլափում վատնելուց յետոյ, մեքենապէս վերադարձաւ իր բնակարանը:

Ֆերուճի դռնապանը դիմաւորելով նրան, դժգոհութեամբ ասաց.

—Իմ տէրն այս ժամանակ ճար էր, երբ պէտք է լինում՝ չըգիտեմ ուր է գնում:

—Ի՞նչ կայ՝ Գիտս.

—Ի՞նչ պիտի լինի, մի պճնազգեստ պայիկ քսան անգամ քեզ համար եկաւ ու գնաց, երբ տեսաւ չըկաս, այս նամակը թողեց:

Ֆերուճին մի մագաղաթ ներկայացրեց գլանաձև ոլորած, կարմիր երիզով շրջապատած ու կնքած: Լէօն նամակն առաւ և շտապեց իր խուցը...

«Մի յայտնի անձնաւորութիւն,—գրած էր նամակում,—կրցանկայ ձեզ հետ տեսնուել: Այս տեսակցութիւնից կախուած է ձեր բախտն ու ապագան: Յանուն ձեր բարերարին, Հայոց—դեսպանին, քանի որ աղքատ ուսանող էք, առաջարկւում է առաւօտուն գնալ մեծ թէատրի դէմ, Փէօիաշիտէս վաճառականի մօտ և ասել այս խօսքը—պասrաnս եմ.—Նա ձեզ կըտայ ձեր գիտութեան և աստիճանին յարմար դգեստ, փող և ինչ որ Հրամայէք. նա կառաջնորդէ ձեզ ինձ մօտ: Նամակս այրեցէք: Այս ժամադրութեան մասին ոչ ոքին չըխօսիք. այսպէս է պահանջում ձեր բարերարի շահը»:

—Փառք կամ մահ,—մրմռաց ուսանողն և նամակն այրեց:

ՄաՅկաԿաՅԱՅոյՏՅԵր

XVI

Լէօն չըկարողացաւ գիշերն հանգիստ ննջել. ոսկեզօծ յոյսերն այժմ տեղի տւին մտատանջութեան, թեր ու դէմ կարծիքներ, ուրախ ու տխուր օրօրեցին նրա նինջը գիշերն ի բուն:

Առաւօտուն զարթնելուն պէս Ֆէօխարիտէս վաճառատունը դիմեց և ներկայանալով պայմանեալ խօսքն արտասանեց:

—Ես,—ասաց Հաոտամարմին վաճառականն,—ձեր գալըստեան՝ Տէր իմ, երեկ էլ սպասում: Դուք ունիք ինձ մօտ, անսահման վարկ, որչափ կամենաք կարող էք վեր առնել ոսկի... Բայց՝ նախ, խնդրեմ, բարեհաճեցէք մտնել իմ առանձնասենեակը...

Ֆէօխարիտէսի սենեակում մի կապոց եր դրած:

—Վեր առէք—ակնածութեամբ ասաց վաճառականը կապոցը ցոյց տալով,—դրա մէջ կըգտնէք դգեստ, զարդ և ձեր հասցէին նամակ:

Լէօն արդէն հաշտւած էր իր մտքի հետ, վեր առաւ կապոցը, քրքրեց և գտաւ հետևեալ երկտողը.

«Սիրելի փիլիսոփայ, խնդրում եմ առանց դիմադրութեան և անկասկած հագնէք այս դգեստները, զէն ու զարդը, վեր առնէք ինչ գումար որ բարեհաճիք, ապա՝ Ֆէօխարիտէսի առաջնորդութեամբ, գնաք ձեր նոր բնակարանն իբրեւ իշխան՝ ուր պիտի գտնէք ծառաներ և ստրուկներ... Եւ ինձ շուտ կըտեսնէք»:

Լէօն խոյոյն ցնցոտիները մերկացաւ. վայելչապէս հագուեցաւ: Մեր դէմ կանգնած է նա, թխաթոյր և արծւի հայեացքով, մի քիչ ծռած՝ հայի քթով, նրա դգեստներն են իշխանական, համակ մետաքսեայ, և ոսկեթել անկած՝ յունական շռայլ ոճով: Թևերին կապեց արեգակնափայլ ազամանդակուռ բազպաններ, գլխին դրեց ոսկեզօծ սաղավարտ, որի բոցախուփ գարգմանակը ճօճում էր սէգ առիւծի բաշի պէս, գօտիից կա-

խեց գոհարապատ սուրը: Նա քննեց իր դէմքն արծաթի հայելու մէջ, ինքն իրենից պատկառեցաւ: Զինուորական վէս ու խրոխտ կերպարանքի արևաւոր գծերը, մեղմացած էին մի տեսակ անուշ երևոյթով, որ տպաւորած էր մտաւորական մեծ զարգացումը:

—Գնանք, իշխանդ իմ,—յարգանօք ասաց վաճառականը,—բայց՝ չէիք կամենում փող վեր առնել...

—Ոսկի հարկաւոր չէ,—ժպտեց Լէօն խստիւ,—զգեստներն էլ վեր սուաց գիտենալով որ մի մեծ ազնւականի հետ է գործս:

—Գիտէք ուրեմն,—հարցրեց Ֆէօխարիտէս զարմանքով:

—Գոնէ գուշակում եմ: Երթանք:

Վաճառականն առաջնորդեց նրան: Մի քանի փողոցներ անցնելուց յետոյ՝ մօտեցան մի մարմարաշէն ապարանքի, որի դռան առաջ, իբր պահակ, կանգնած էին երկու մակեդոնացիներ՝ ծփուն զգեստներ հագած, ձեռները սրերին՝ պատրաստ զգաստ որսկանի պէս:

Լէօն ներս մտաւ, խոր ակնածութեամբ ընդունեցաւ ծառաներից. Ֆէօխարիտէս տարաւ նրան մի պերճ ու շքեղ դահլիճ:

—Տէր իմ,—ասաց յարգանօք խոնարհելով,—ձեր բնակարանի մէջն էք... Ինձ հրամայուածն ես կատարեցի, շարունակութիւնը ձեր գործն է, այնուամենայնիւ՝ իշխանդ իմ, խնդրում եմ յիշէք ձեր ծառայի մօտ անսահման վարկ ունենալներդ:

—Պատուական Ֆէօխարիտէս, երբէք չեմ մոռանալ ձեզ և իմ վարկը:

—Ձեր պատրաստական ծառան եմ ընդ միշտ:

Վաճառականը Հեռացաւ, երիտասարդն սկսեց մեծաքայլ ճեմել դահլիճի մէջ: Նա այսպիսի շուայլ ու պերճ բնակարան տեսած էր միայն Հայոց դեսպանին յատուկ: Ամեն կարասիք, կահներ, զարդեր մեծագին էին և Հազուագիւտ:

—Օ՜ն անդր,—շշնջաց երիտասարդը,—այս առեղծուածի

մէջ՝ մեծ դերասանի դեր կատարելն իմ գործին կըղայ, անշուշտ պիտի տեսնեմ այն անձը, որ առանց ճանաչելու բարիք է անում՝ ո՛ւ գիտէ ինչից թեւաղրւած...

Դեռ մտածում էր Լէօն՝ երբ ներս մտաւ՝ մի բարձրահասակ, ըստ երևոյթին տասն ու վեց տարեկան, վերին աստիճանի գեղանի պատանի, իշխանական բոլոր վայելչութեամբ հագուած:

—Ջնորհակալ եմ,—ասաց նա յուզուած, Լէօնի ձեռի բռնելով,—նորատի փիլիսոփայ, որ զուրկ չես և քաջութիւնից. դու յարգեցիր քեզ գրողին, ներկայացար պայմանեալ ժամին:

—Ուրեմն, իշխան, դո՞ւք էք ինձ գրողը...

—Այդպէս համարեցէք,—սկսեց յոգնակի խօսել յոյնը:

—Ձատ լա՛ւ, ես պատրաստ եմ ձեր հրամանին.

—Ձատ ուրախ եմ: Նախ և առաջ, տէր իմ, խնդրում եմ չբսրտնեղիք իմ պալատում, որ և ձեր սեպհականութիւնն է:

—Ի՞նչպէս կարող է իմ սեպհականութիւնը լինել, իշխան, ինձ մի շփոթէք բախտախնդիր երիտասարդի հետ. ես այս գգեստները չըպիտի ընդունէի, պիտի գայի իմ շորերով, բայց՝ բարերարիս անունը խառն լինելով այս դրամայի հետ՝ ընդունեցի, սակայն՝ պիտի մերկանամ՝ եթէ օրինաւոր չըգտնեմ: Ուրեմն՝ ինչ է այս, դրամա՞...

—Ես՝ տէր իմ,—կարմրելով, յայտնի յուզումով շշնջաց չքնաղագեղ պատանին,—ձեզ բացատրութիւն տալու առ այժմ իրաւունք չունեմ. պիտի բնակուիք այս պալատում, ապրիք արքայավայել ճոխութեամբ, զբաղուիք ձեր սիրած զբքերով, կամ մարզանքով, մինչև որ ժամանակը գայ:

—Ո՛չ,—դրաստէս ժխտեց Հպարտ գիտնականը՝ ոտքի ելնելով,—ո՛չ, իշխան. չեմ կարող հնազանդել ձեր հրամանին:

—Բայց... հրամայւում է ձեզ:

—Ես հայ եմ, իշխան, ինձ և ոչ մի յոյն կարող է հրամայել...

—Եւ ոչ իսկ բարերա՞րդ...

—Ա՛հ, մեր դեսպանը՞...

—Նոյն ինքն...

—Ո՛հ... ո՛ւր է, ո՛ւր է այն պաշտելի իշխանը...

—Ձե՛ս հնազանդում և հայրենիքիդ ձայնին, գիտնակա՛նդու, հայրենիքիդ, Հայաստանին եմ ասում, որ արիւնալի մի թէատր է այս րոպէիս, որ հրի, սրի, աւերածների տակ կը հառաչէ... մի կողմից պարսիկները, միւս կողմից ներկայ մեր թագաւորող կայսերակից տունն է կործանում նրան...

Լէօն ահակալած, լուռ արձանացաւ, ինչպէս զարհանակալ կորիւնն է անում մի յանկարծական ոստիւն գործելու համար:

—Խօսեցէ՛ք, ազնի՛ւ իշխան,—հեղձամղձուկ շշնջաց նա,—խօսեցէ՛ք իմ անբախտացած հայրենիքի մասին, սիրտս տրաքւում է... Ես ոչինչ չըգիտեմ, լսած չեմ հայրենիքից...

—Ես, տէր իմ,—յաղթանակով երիտասարդին նայելով,—առ այժմ այսքանն եմ յայտնում հայրենիքիդ և նրա մեծափառ դեսպանի անունով, որ այս պալատը ձերն է, ձերն է և Ֆէօխարիտէսի մօտ անսահման վարկ ունէք, իսկ վաղւանից կիմանաք ձեր ինչ գործելը...

Պատանին շնորհալի կերպով ողջունեց ու դուրս ելաւ. Լէօն մտքերի մէջ խորասուզած, կանգնած էր...

XVII

Թէ ինչ էր պատահած Հայաստանին և Հայոց—դեսպանին, որոց յիշատակն այժմ կաշկանդած էր երիտասարդ գիտնականին վառահեղ պալատում, մի քանի խօսքով կըպատմենք:

Բիւզանդիօնի հանգուցեալ կայսրն՝ որ բարի և ազնիւ մարդ էր, ազգով հայ, եթէ չէր օգնում միշտ հարստահարութեան ենթակայ, սրտառուչ տեսարանների հանդիսարան Հայաստանին, գոնէ վնաս էլ չէր տալիս, պատուով էր վարւում նրա արքայազն իշխանի հետ: Ափսո՜ս, կայսրն արու զաւակ չունէր,

միայն մի տասն հինգ տարեկան գեղանի աղջիկ Արտեմիս անունով՝ կայսերական անհաստատ գահին ժառանգ էր թողնում: Յանկարծ կայսրը վախճանեցաւ և խակոյն թագը խլեցաւ մի յայտնի զօրապետից: Նա խակոյն յեղափոխեց երկիրն և սկսեց իր նախորդի սիրածն՝ ատել, ատածը՝ սիրել. նա ընդ վոյթ բարկութեամբ հայերի կողմը դարձաւ, բանտարկեց նրանց դեսպանին իր շքախմբով և հալածեց յունահպատակ հայ ժողովրդին բոլոր խստութեամբ: Պարսիկներին շահեցաւ ընծաներով, հայոց թագաւորի դէմ զրգռեց, ինքն էլ մի կողմից պատերազմի դուրս գալով, երկու կրակների մէջ մնաց Հայաստան: Նա ցանկանում էր և հայկական թագը դնել իր գլխին.. Այս բարբարոս կայսեր հալածանքից չազատուեցան նաև աղնւականն, հարուստ յոյները. շատ զօրապետները, իշխանները, բարձրադիր մարդիկ կրկէսների մէջ՝ գազանների կերակուր, նետահարութեան նշանակ, դահճի սաղկրին տակ ընկնում էին նախատուած: Եւ հանգուցեալ կայսեր տիկինն ընկած էր բանտ, մահ էր սպառնում և թագաժառանգուհուն, որ բարեբախտաբար հօրը մեռած ժամուն անյայտացած էր: Դեռ մի տարի չէր թագաւորած այս հրէշն, երբ սկսեցան խելացի դատաստութիւնները, զինուորական ու քաղաքացի՝ խիստ գաղտնի ձեռք ձեռքի տուած սպասում էին յարմար ժամանակի: Հայոց դեսպանն և շատ յոյն իշխաններ մաշւում էին բանտերի մէջ: Այս բոլորի մասին Լէօն ոչինչ չգիտէր: Ուսումնարանից վերադարձին յոյն զօրքով դրաւած էր գտել հայոց դեսպանատունը. Հարցրել էր մի քանի հայերից, ոչ մի գոհացուցիչ, կամ դրական պատասխան չէր ստացած, որովհետև՝ ձերբակալութիւնն յանկարծ էր եղած: Պարզ հասկանալի է ուրեմն Լէօնի հետաքրքրութիւնն ու կրաւորական հնազանդութիւնը դէպի դեսպանի անունը...

—Ո՜հ,—ասում էր նա հառաչելով,—իմ կեանքս յօժարակամ կզոհեմ հէգ իշխանին փոխարէն... Բայց՝ ո՞ւր է, ինչպէս ազատել: Նրա խօսքերն արդարացի դուրս եկան.—ուսումն առանց դէնքի մի ծիւրած գիտուն, դէնքն առանց ուսման մի տխմար հերոս կարող են ստեղծել... Հիմա ես ոչ մինն եմ... բայց՝ պէտք է փրկել նրան: Ս է յ ւ ա ճ

(Կը շարունակուի)

ՀՐԱԽԷՐ ԳԱՐՆԱՆ

—

Ե՛կ, ո՛վ գարուն
Սիրագորով,
Ե՛կ զարգարուն
Սար ու ձորով.
Լցիր երկիր
Հատիկներով,
Կանաչ-կարմիր
Ծաղիկներով,
Դաշտ ու հովիտ
Ջեփլուռներով,
Ականակիտ
Աղբիւրներով,
Նորաբողբոջ
Ծըմակներով,
Քաղցրախոխոջ
Վըտակներով.
Մանկանըման
Գառնուկներով
Եւ ծըլվըլան
Ճրնճղուկներով։
Քաղցրի՛կ գարուն,
Նախշուն, սիրուն
Կաքաւներով,
Եկ հաւերով,
Գեղաճիճաղ
Արևներով,
Եւ կենսաշաղ
Անձրևներով.
Ծով ու ցամաք
Լըցիր կեանքով,
Փիւղ ու քաղաք—
Աշխատանքով.
Հանդ-Հանդաստան—
Առատ ցանքով,
Ձէն ու աւան—
Արդար ջանքով։
Ե՛կ անուշիկ,
Պերճ մայիսով,
Կարմրաթըշիկ
Մանչ ու կուսով.
Նըրանց պահիր
Ամուր յուսով,
Լուսաւորիր
Ուսման լուսով։

ՍԻՄԻՈՆ ՍԱՓԱՐԵԱՆՑ

ՄԻ ԿՏՈՐ ԹՂԹԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

I

Թանուքիից բերին մի ֆունտ սապոն, որը վաթաթած էր մի կտոր գրած թղթի մէջ։

Լացարարուհին սապոնը վերցրեց և թղթի կտորը դցեց նստարանի տակը, ուր սարդը տարածել էր իր ճարտարահիւս ոստայնը։

— Է՛հ, ոլ մտածում ես,— փնըթփնթաց թղթի կտորը, ծուռ-ծուռ նայելով սարդի վրայ,— ես իմ ամբողջ կեանքում ծառայել եմ մարդկանց, բայց ինձ դցեցին նստարանի տակը. իսկ ոմանք մեայն ճանճերի՛ հետ են զբաղանում կամ քաշւում են մի անկիւն և ոչ մի բանի մասին չեն մտածում։

— Ա՛յ հէնց դա ճշմարիտ չէ,— ծիծաղեց սարդը,— ես շատ կըցանկալի իմանալ, ինչ ծառայութեանդ համար են մարդիկ քեզ գցել այստեղ, և, եթէ դու ինձ պատմես այդ, ես ուրախութեամբ կըլսեմ, սպասելով իմ ճանճիկներին։

— Եթէ դա հետաքրքիր է քեզ համար, ես ուրախութեամբ կըպատմեմ,— յանկարծ աշխուժի եկաւ թղթի կտորը,— իմ պատմութիւնը լի է արկածներով!... Երևակայիր, օրինակ, ես մի ժամանակ, շատ վաղուց, եղել եմ գիւղում ապրող մի պճնասէր կնոջ շորի աջ թևքը!...

Բայց ես բոլորը կարգով կըպատմեմ։

Յիշում եմ մի մեծ մազազին, ուր կային շատ թանգագին և գեղեցիկ կտորներ. այնտեղ ամենից վերևի դարակի վրայ դարսած էինք մենք—չիթերս:

Զանձրալի էր մեզ համար!... Ամեն օր կրկնւում էր միևնոյն բանը. ոմանք վաճառում էին, մի-սներն առնում, սակարգում կամ ընտրում էին: Ես այն ժամանակ շատ էի ցանկանում, որ ինձ առնեն, և իմ ցանկութիւնը, վերջապէս, կատարւեց:

Ինձ առաւ մի ինչ որ գեղջկուհի, որ շատ էր քրքրել չիթերը և բոլոր ժամանակ խնդրում էր աւելի ու աւելի բազմերանգ կտորներ: Ես ամենից նախշունն էի, և ինձ վրայ նկարւած էին խոշոր վարդեր:

Երկար սակարգելուց և մօտ տասն անգամ հարցնելուց յետոյ թէ գոյները չե՞ն խոնանալ հօ, առնողը խնդրեց, որ չափեն 15 արշին, որ և փաթաթեց թաշկինակում ու դրեց մի ինչ որ քսակի մէջ, ուր կային մեխեր, հաց, թէյ, շաքար և այլն:

Նոր տիրուհիս ինձ դիւղ բերաւ և հէնց միւս օրը մեծ մկրատով ձևեց և սկսեց կարել: Խոստովանում եմ, շատ էլ դուր չէր գալիս, երբ նա կտրտում էր ինձ և յետոյ ծակոտում սուր ասեղով. բայց նա դրա վրայ ուշադրութիւն չէր դարձնում, և շուտով պատրաստ էր նրա նոր շորը, որի աջ թևքն էլ ես լսկապէս:

Սկզբից իմ ապրուստն այնքան էլ վատ չէր: Իմ տիրուհին պահպանում էր իր նոր շորը և հագնում էր միայն հանդիսաւոր օրերին. մեծ տօներին էլ հագած գնում էր եկեղեցի կամ ուրախ զբօսանքների և մասնակցում էր խմբական պարերին և պարերգերին:

Բայց դա երկար չըտևեց!... Նա սկսեց աւելի և աւելի յաճախ զուգել և մի անգամ այնպէս ցեխոտեց շորը, որ այլ ևս չըզրեց նրան պահարանում, ինչպէս առաջ էր անում, այլ ուղղակի գցեց տաշտակի մէջ, եռացած ջուր լցրեց վրան

և սապոնով լաւ տրորեց։ Իսկ միւս օրը ցայեց պաղ ջրով և այնպէս մղեց, որ շորը ճչաց։ Եւ այդ ժամանակից յաճախ կրկնւում էր այդ շորի լւանալն ու ցայտումը։ Մանաւանդ տուժում էինք մենք — Թևքերս!...Յիշելն անգամ վիրաւորական է.— էլ ինչ ասես, որ մեր գլխին չէին դնում.— ալիւրի մէջ էլ էինք մտնում, ցեխի կամ մուրի մէջ էլ. իսկ յետոյ լացքի ժամանակ որքա՜ն էինք տուժում!...

Բոլոր վարդերը ինձանից անհետացան և, վերջապէս, շորից ինձ պոկեցին բոլորովին և սկսեցին ինձանով նստարանների թոզ էլ սրբել, հեշտաեռն էլ մաքրել. վերջը կոտրած պատուհանի ճեղքը ծածկեցին ինձանով։ Քամին երկար ժամանակ սաստիկ փչում էր, մինչև որ ձանձրանալով, դուրս պրծայ պատուհանի ճեղքից, և նոյն բարեկամ քամին ինձ տարաւ դէպի մի ցանկապատ։ Այստեղ մի գեղջուկ ոտքով ինձ այնպէս ճնշեց, որ ցեխի հետ համարեա հաւասարւեցի. մտածում էի, թէ հէնց այդպէս էլ կըմնամ և կըփտեմ ցանկապատի տակ, բայց ուրիշ կերպ պատահեց։

II

Մի անգամ տեսնում եմ, որ ցանկապատին մօտենում է ցնցոտիներ հագած մի երեխայ՝ ուսին մի քսակ՝ և կռանալով, սկսում է ցեխի մէջ մի ինչ որ բան դիտել։—«Ի՜նչ է որոնում նա», մտածում էի այդպէս, երբ նա յանկարծ բռնեց իմ ծայրից, դուրս քաշեց ցեխից և դրեց քսակի մէջ։ Ե՛թէ գիտենայիք, թէ ինչպէս մաքուր էի այդ ժամանակ։ Սակայն ինձանից լաւ չէին կեղտոտ քսակի միջի իմ ղրացիները։ Եւ ի՜նչ ասես, որ չըկար այդտեղ!... Մեխեր, փալաւներ, կորցրած պայտեր, հին, պատառոտած կօշիկներ, ոսկորներ և այլն։ Երեխան երկար ժամանակ ժողովում էր փողոցում ընկած անպիտք իրերը, և երբ քսակը լցւեց, նա տարաւ մանրավաճառի խանութը, ուր և վաճառեց իր կեղտոտ ապրանքը մի քանի կոպէկով։

Խանութում կային շատ ուրիշ քսակներ՝ նոյնպէս լցրած անպէտք իրերով։ Ինձ դրանց հետ միասին ուղարկեցին մի մեծ շինութիւն, բազմաթիւ պատուհաններով, որ անւանում էր «Գործարան»։ Մի մեծ սենեակում մեզ դուրս տւին քսակներից և դասաւորեցին զանազան արկղների մէջ։ Յետոյ բոլոր չթեղէն ցնցոտիները, նրանց հետ և ինձ, դրին մի մեծ մեքենայի մէջ, որ իր ներսն ունէր ատամնաւոր չարխ, ներքևից—մաղ, իսկ վերևից—խողովակ։ Այդ մեքենայի մէջ մեզ մի լաւ թափ տւին, բոլոր աղբը դուրս եկաւ մաղի միջով, իսկ փոշին խողովակով թռաւ, բարձրացաւ դէպի օդը։ Յետոյ մեզ լւացան՝ տաք մոխրաջրով կամ կրաջրով լի մի քանի աւազաններում, իսկ յետոյ ցայեցին ջրի մէջ։ Բայց դա միայն տանջանքի սկիզբն էր!... Աւելի շատ տուժեցինք, երբ մեզ նորից դնեցին եւացող աւազանի մէջ, որ նոյնպէս ունէր մի ատամնաւոր չարխ և այնպէս արագ պտտւեց այդ չարխը, այնպէս ճարպիկօրէն սկսեց մեզ գզել, որ դեռ ուշքի չեկած՝ մենք բոլորս քրքրւեցինք և փոխւեցինք թելերի, իսկ յետոյ՝ ամենաբարակ նրբաթելերի. որքան արագ էր պտտւում չարխը, այնքան աւելի էին մանրանում նրբաթելերը, մինչև որ աւազանի միջի փալասներից, վերջապէս, գոյացաւ թանձր խաշիլ։ Այդպէս արագ պտտելուց ուշադնաց եղայ և ուշքի եկայ միայն այն ժամանակ, երբ արդէն Հարթ ու սպիտակ թերթ էի մի ամբողջ օդմա թղթի ամենաւերի տետրակի մէջ։

Թէ ինչպէս այդ խաշիլից ես թուղթ դարձայ, դա իմացայ յետոյ, դիտելով գործարանի աշխատութիւնները, ուր բաւական ժամանակ մնացի միւս թերթերի հետ։ Խաշիլը մի քանի օր սպիտակացնում են կրային բաղադրութիւնով և մէկ էլ մի բանով, որը անւանում են ֆլօր։ Յետոյ մի քանի անգամ լցնում են ատամնաւոր չարխով աւազանի մէջ, մինչև որ նրանից, վերջապէս, գոյանում է սպիտակ հեղուկ։ Այդ հեղուկը լցնում են չանաղի մէջ, որի յատակի մօտից մի խողովակ է տարած։

Այդ խողովակով թղթեայ հեղուկը շատ բարակ շերտով հոսում է հարթ յատակով մի պղնձէ լայնաբաձակ ամանի մէջ, որի եզրներով կաշի է ձգւած, որ հեղուկը չբթափւէ յատակի վրայ։ Օդի մէջ թղթայինն զանգւածը թանձրանում է, իսկ չորանալու և աւելի հարթւելու համար՝ նրան բաց են թողնում ծանր ու ողորկ պղնձէ տաք գլանաձիւեերի միջով, որտեղից յետոյ դուրս է գալիս սպիտակ թղթի անվերջ երկար զօլը։ Այդ զօլը փաթաթում են ոլորաձիերի վրայ, կտրտում, ծալում և թերթեր են շինում, իսկ յետոյ վեցական թերթ մէկը միւսի մէջ դնելով, տետրակներ են կազմում։

Ձորս այդպիսի տետրակները մի դաստա են կազմում, իսկ քսան դաստան—ձմա։

III

Գործարանից ընկայ թղթավաճառի մի մեծ խանութ։ Այդ խանութում կային զանազան գեղեցիկ իրեր.—գրչահատներ, գրչակոթեր, գոյնզգոյն թղթեր, լուսամփոփներ,—այդ բոլորը զանազան տեսակի էին և զանազան գներ ունէին։ Գնողները մեծ մասամբ երեխաներ էին։ Ա՜խ, ինչպէս զարմալի էին այդ մանկիկները! Փագազին է գալիս, օրինակ, որ և է փոքրիկ աղջիկ, և աչքերը սկսում են փայլել։ Երևում է, որ ուզում է շատ ու շատ լաւ բաներ գնել։ Օրինակ, ընտրում է քարեգրիչ, և չգիտէ, ինչպիսի փաթեթով առնէ.—վերցնում է վարդագոյնը,—կապոյտը չի ուզում թողնել, իսկ եթէ փոխում և վերցնում է կապոյտը, նրան թւում է, թէ վարդագոյնը աւելի լաւ է։ Երբեմն ուզում էի դարակից թռչել, նրա հէնց ձեռքերի վրայ ընկնել,—«վերցրու ինձ, տար քեզ հետ»։ Եւ ահա իմ ցանկութիւնը կատարւեց։ Ինձ ուրիշ երեք թերթերի հետ առաւ մի փոքրիկ, գեղեցիկ աղջիկ։ Նա մեզանից տետրակ կարեց, վարդագոյն թղթից շապիկ հագցրեց, և ամեն օր, պայուսակի մէջ դրած, տանում էր ուսումնարան։ Շատ անգամ հանում էր ինձ պայուսակից և սկսում էր ժրաջան կերպով տառեր կամ խօսքեր դուրս բերել մէկը միւսի յետևից։

Ինչքա՜ն մաքրասէր էր այդ Լուսիկը—իմ փոքրիկ տիրուհին! Ո՛չ մի բիծ չըկար նրա տետրակի վրայ!

Եւ որքա՜ն շատ էին փոքրիկ երեխաները ուսումնարանում!... Որքա՜ն ուրախ և կայտառ էին նրանք. աղմուկ էին Հանում, վազվզում էին, իսկ երբ բոլորը միասին սկսում էին կարդալ, խուլ ձայն էր լսւում—ժժժժ!... Կարծես մեղուներ լինէին փեթակի մէջ: Եւ ինչպէ՞ս բոլորն ուրախ, բարի և բախտաւոր էին!...

Ընտիր հասարակութիւն էր!...

Բայց ահա թերթերը մէկը միւսի յետևից գրւեցին... և իմ Լուսիկի տետրակն արդէն վերջանալու վրայ էր. շուտով նա գրեց, վերջացրեց ամբողջ տետրակը: Մայրիկը խորհուրդ տւեց նրան, որ ինձ փոխէ նոր թղթի հետ. աղջիկը բոլոր թերթերը հանեց շապկից, տարաւ մանրավաճառի խանութը և փոխեց երկու թերթ մաքուր թղթի հետ: Թուղթը վերցրած՝ նա վազեց, ոստոստելով, իսկ ես ակամայ մնացի ընկած կեղտոտ դարակի վրայ:

Բայց երկար չըպատւեց այստեղ,—հէնց այդ օրը խանութ եկաւ մի երեխայ և մի ֆունտ սապոն խնդրեց: Խանութպանը պոկեց ինձ տետրակից, սապոնը փաթաթեց և տւեց երեխային:

Սկզբից ուրախացայ մտածելով, թէ կրկին կ'ընկնեմ, երեխաների մօտ,—բայց այդպէս չեղաւ! Երեխան ինձ բերաւ այստեղ և տւաւ ահա այս կնոջը, որ ճերմակեղէն է լւանում, իսկ նա գցեց ինձ նստարանի տակը, ուր և պատահեցի քեզ:

—Ահա իմ ամբողջ պատմութիւնը, վերջացրեց թղթի կտորը:

—Խրատական պատմութիւն է,—ծաղրական կերպով պատասխանեց սարդը,—բայց, խոստովանում եմ, ես չէի ցանկալ քո տեղը լինել.—շատ չարքաշ կեանք է!... Ուրիշ բան է ճանճիկները անուշ անելը!

Այդ ասելով, սարդը յարձակւեց սարդոստայնի մէջ ընկած ճանճի վրայ և սկսեց ագահօրէն ծծել նրան: Թղթի կտորը

զգւանքով երես դարձրեց նրանից և անւանեց ծոյլ ու որկրամոլ, ապա սկսեց խոր մտածել, թէ ինչ է սպասում իրան...

Արդէն մթնում էր... Հարևան սենեակից մէկը մոմ խնդրեց: Լուցարարուհին, նկատելով յատակի վրայ ընկած թղթի կտորը, փաթաթեց նրան մոմի ծայրին և մոմը ամրացնելով մոմակալի վրայ, տարաւ միւս սենեակը: Այստեղ, սեղանի առաջ, նստել էր մօտ տասն տարեկան մի երեխայ և գիրք էր կարդում: Ելկաը կարդում էր նա... Կէս գիշերին մօտ էր, բայց նա չէր պոկւում գրքից. վերջապէս, գլուխը թեքւեց սեղանի վրայ, և նա պինդ քնեց... Իսկ թղթի կտորն ուրախ էր, որ կրկին անգամ ծառայում է նրան, որին այնքան սիրում էր... Յանկարծ նա սաստիկ տաքութիւն զգաց և դեռ չիմացած, թէ ինչ բան է՝ բռնկւեց և շուտով այրւեց... Մոմը ծուխ արձակեց և հանգաւ: Եւ մոխիրը թափւեց սեղանի և բացած գրքի վրայ...

Ընջատատը մութն էր և հսնդիստ. թղթի կտորի թափառական կեանքն էլ հանգաւ:

Թարգմ. Ջ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ



Ա Ե

Վայոց ձոր

Ըրպէս ամեհի փոթորկից ալեկոծւած փրփրադէզ ծովի մի հատւած Ամենակալի մատով մի ակնթարթում քարացած՝ ահա ընդհանուր պատկերը Վայոց ձորի, երբ առաջին հայեացք ձգում էք նրա վրայ Գեղամայ հսկայ բարձունքից: Երկու կողմից ամպածրար երկնամերձ լեռների կուտակուրթիւնները վիթխարի կոհակների նման իրար վրայ յանկած, անթիւ կողմնակի ձորձորներով կազմում են մի երկար անդնդախոր ձոր Զորոյգետ այժմ Արփա անուն գետով, որ սկսւում է Հիւսիսում Գեղարքունիքի, արձաթի հանք պարունակող, լեռների ստորոտից, գնում է դէպի հարաւ, նախ իր ափերում, այժմ Ղուշչի՝ նախկին Կէճառ հայ գիւղի մօտ՝ ունենալով ընտիր, խիստ տաք, ծծմբային ջերմուկներ, պաղ երկաթաջրեր, և սոդային աղբերակներ, շրջապատած յոյժ սքանչելի կաղնի, ցրտենի, եղեւնի բուրաստաններով և նմանը չեղած մարմանդներով՝ գետը մտնում է Գնդեվազ հայ գիւղի անմատչելի խոր, սեպացած քարափնեայ, զարհուրելի կիրճը, որի մութ յատակում, գետի ափին, անհնարին վտակների մէջ կայ՝ այժմ ամայի և կիսաւեր մի մենաստան, գմբեթաւոր, պարսպապատ, խցերով: Մի գլխապտոյտ կածանով այստեղից կարելի է բարձրանալ լեռնային տափարակի վրայ գտնւող Գնդեվազ գիւղը: Զորոյգետը

խոչ ժխոր հանելով, մռնչալով, որոտալով ապա հոսում է դէպի արևմուտք մինչև Վայոց ձորի վերջին գիւղը՝ Արփա, յետոյ կրկին հարաւ դիմելով, Զարուրի նորաշէն Հայ գիւղի մօտ, մի նորակառոյց երկաթէ կամուրջի տակով ազատելով լեռնային կապանքներից, ազատ սփռւում է Զարուրի ահագին դաշտավայրի վրայ, շաղ գալով անթիւ ոռոգիչ առուներով, հուսկ ուրեմն չռւում կլանւում է Նրաքսի կոհակների մէջ։

Բարձրաբերձ լեռներով Վայոց ձորը կտրւած լինելով շըրջակայ գաւառներից, ձմեռը յարաբերութիւնն արտաքին աշխարհի հետ կատարւում է միայն Զարուրի դաշտի կողմից՝ Արփա գետի ափով, ուր կառուցի էլ շինւած է մինչև Վայոց ձորի Քեշիշ-քեանդ գիւղը, ուր գտնում է այս լեռնային մեծագոյն և մօտաւոր գաւառի միակ, միդասեան կառավարչական դպրոցը։ Շրջակայ գաւառների՝ Դեղարքունիքի, Ջանգեձորի, Երնջակի հետ լեռնային կապանքներով երթևեկութիւնը կտրւում է դեկտեմբերից մինչև մայիս։

Վայոց ձորի օդը, կլիման շատ անմահն է և կենսապարար մանաւանդ միջակ նստւածք ունեցած դեղերում—փոռ, Ագատակ, Մալիշկա, Աղւանաձոր, Չերհեր։ Մի քանիսը գերազանց ամարանոցներ են. Մարտիրոս, Ղուշչի-Բլակ, Բաշքեանդ, Սեւ, Թարաթումբ։ Վայոց ձորի կլիմայի գլխաւոր յատկութիւնն է մեղմութիւնը ընդհանրապէս տարւայ ամեն եղանակների մէջ, որ առողջութեան գլխաւոր պայմանն է, մանաւանդ որ ամեն տեղ լիքն են թէթև մարսական ջրառատ աղբիւրներ։ Հողը բերրի է առհասարակ. լեռնային արօտները ճոպկաւէտ և բուրալի, ուստի Նախիջևանի, Երևանի շուկաների մէջ յայտնի են Վայոց ձորի, կամ ինչպէս հիմա նա կոչւում է, Գարալաղեազի իւղը, պանիրը և մեղրը։ Մի քանի գետափնեայ գիւղերում կան խոշոր այգիներ—Մալիշկա, Քիշիշքեանդ, Ղօլթուր. ցանում են մինչև անգամ սակաւ բրինձ և բամբակ, որ քչութեան համար չարժէ իսկ յիշել, բայց շատ գիւղերում կան խիստ ընտիր ծիրանուտներ. միայն մի քանի գիւղերում մի

Աճպրակաց ցուցիկներ

քանի կանայք տնային պէտքերի համար շերամի որթ են պահում. մի խօսքով ինչպէս ամեն տեղ, Վայոց ձորումն էլ, գիւղատնտեսութիւնը ամենաստոր աստիճանի վրայ է գտնւում և ոչինչ նոր սկսւածք դեռ չէ եղած:

Յիշենք Վայոց ձորի մի քանի հայ գիւղերը. ամենից բազմամարդ գիւղն է Մալիշկա, 200 տուն. գտնւում է մի քարաժայռոտ ծոցում, քարափի վրայ, Արփա գետից 3 վերստ հեռու. լիշեալ քարափի տակից բղխում են զարմանալի առատութեամբ ամենասէիթ, յոյժ մարսական, թեթև ջրեր, որոնցով բանում են շատ ջրաղացներ և ոռոգւում են այս այգեւէտ գիւղի գիւթական բազմաթիւ այգիները և պարտէզները: Այդ հրաշալի աղբիւրները, ոռոգման ամենակարևոր ժամանակը, մայիսից մինչև օգոստոս, շատանում են, զրեթէ տասնապատկւում են, իսկ ձմեռը չափաւորւում, այդպիսով մի տեսակ նմանելով Եգիպտոսի Նեղոս գետին... Մալիշկան արտադրում է առատութեամբ և վաճառում է շրջականերում ընտիր գինի, ողի, խաղող, ծիրան, շատ համեղ սեխ, սոխ և այլն: փողովուրդը աշխատասէր է, օտարութիւն չի գնում. եկեղեցին անշուք, խարխլւած. դպրոց չկայ. այս միակ գիւղն է Վայոց ձորում, ուր միշտ ժամասացութիւն է լինում. մնացեալ գիւղերում ամիսներով զանգի ձայնի չի լսւում, բայց եթէ մեծ պասին, կամ երբ ննջեցեալ պատահի:

Մալիշկից 5 վերստ վերև բարձր լեռների ստորոտում, Թրքական Արզեազ գիւղին կից, գտնւում է հռչակաւոր, Վայոց ձորի Սուրբ Խաչ վանքը, որի ուխտի օրն է ամեն տարի Հոկտեմբերի առաջին կիսում պատահած կիրակի օրը. ուխտաւորների թիւը շրջակայ գաւառներից միշտ հասնում է ոչ պակաս քան տասն հազարի. նմանապէս դա է տօնավաճառ, ուր տասնեակ հազարների առևտուր է լինում: Մի օրւայ մէջ իաչահամբոյր լինում է 1500—2000 ր., որից 600 ր. դրկում են ս. Էջմիածնի ճեմարանին, իսկ մնացեալը Երևանի թեմական դպրանոցին. տարւայ ընթացքում եղած եկա-

մուտները պատկանում են պահապան աբեղայիին: Ս. Խաչը շատ հին վանք է. ասում են Հերակլ կայսրը 628 թուին խաչափայտը գերուԹիւնից ազատած երբ բերում էր Պարսկաստանից՝ մի գիշեր այստեղ մի հայ բամբիշի--իշխանուհու հիւր է եղել և խաչափայտից մի մաս նուիրել է նրան, որի վրայ և շինած է այս վանքը. այժմ ձախ խորանի մէջ համբուրում են մի գերեզմանաքար, որի տակ ըստ աւանդուԹեան ամփոփած է յիշեալ սուրբ մասունքը: Ս. Խաչ վանքի ներկայ հոյակապ տաճարը կառուցել է Մալիշկեցի բարեպաշտ, բանիմաց ՏէրԱռաքել յիշատակի արժանի քահանան ժողովարարուԹեամբ: Վանքն ունի միայն 30 օրավար ջրարբի հող. սակայն ուխտաւորները անհամար են տարւայ մէջ, գրեԹէ ամեն օր:

Այս վանքի մօտի ձորակի միւս ափին գտնւում է հին Թանահատի վանքը, խիստ շատ բարձր կլսակորճան գմբեԹով, ամուր սև որձաքարից հոյակապ շինուած. այժմ այստեղ Թուրքի Ղարաւանք գիւղն է. տները կպած են վանքի պատերին...

Վայոց ձորի երկրորդ նշանաւոր գիւղն է Փոռ—100 տուն. սրա բնակիչները յայտնի են իրենց ուշիմուԹեամբ, հարստուԹեամբ, քաղաքավար կենցաղով. Կողբի, Կաղզուանի, Նախիջևանի աղահանքերի կապալառուն Փոռեցի է, Ջանփոլադեան: Փոռեցի Միրազիզեան, Ջահսուարեան, Գիւրջեան և այլք ունեն մագազիններ Թոստով, Արմաւիր և այլ տեղեր. Ջանփոլադեան մի եղբայրն էլ մի ամբողջ կալւած ունի Վայոց ձորում Սօհլան անունով, ուր պահում է 130 ձիի երամակ, կԹում է հարիւր կով, ունի ոչխարի հօտ, ծառաստաններ, այգիներ, դրամագլուխ, միայն ափսոս, որ իր վեց որդիներից ոչ մէկին գիւղատնտեսական կրԹուԹիւն չի տալի սայլ նշանաւոր կալւածքը բազմարդիւն կերպով մշակելու համար:

Մարտիրոս գիւղ—150 տուն, սրա մօտ կայ լեռան մէջ փորած Աստւածածին անունով մի վանք. Ազատակ—100 տուն, ունի 230 տարւայ մի հոյակապ եկեղեցի: Փաշալու—80 տուն, սրա շրջակայքում կան շատ քարացած խեցիներ. Այար-30

տուն. Քեշիքեանդ-80 տուն. կենդրոնական գիւղ, ունի սիրուն եկեղեցի։ Այգեւէտ։ Օրթաքեանդ-70 տուն. Բաշքեանդ-80 տուն. սրա մօտ մի հիանալի բարձրութեան վրայ կայ կիսակործան բերդ, շէնքերով, եկեղեցիով։ Ղօլթուր-80 տուն, այգեւէտ. Հասան-քեանդ-70 տուն. Էրզափին-50 տուն. Քարագլուխ-60 տուն. Թարաթումբ-60 տուն. Աղաւնաձոր կամ Այնազար-70 տուն. Ռինդ-40 տուն. Արփա-70 տուն, համանուն գետի ափին. Գնդեվազ-70 տուն, Ղուշչի-Բլակ-80 տուն. Հերհեր —80 տուն, հրաշալի եղևնեայ անտառաւէտ, որ գժբախտաբար բնաջինջ լինելու վրայ է. սրա եկեղեցին է մեծ և հոյակապ, նախնի դարերի շինութիւն է, նշանաւոր ճարտարապետութեամբ. այս գիւղում կայ նաև Հայերի չափ թուրք բնակիչ։ Ենգիջա-50 տուն, լաւ մեղր արտադրող։

Այժմ դարձեալ մի քանի ընդհանուր նկատողութիւն անենք Վայոց-ձորի վրայ։ Բոլոր Հայ գիւղերի բնակիչները գաղթական են Սալմաստից, Խոյից 70 տարի առաջ, ռուսաց այս երկիրը նոր տիրապետած ժամանակ. սակայն այդ գիւղերը հնուց էլ, ինչպէս ամբողջ Վայոց ձորը, խիստ հայաբնակ են եղել և բարեշէն ու փարթամ, ինչպէս երևում է անհամար վանքերի, եկեղեցիների, բերդերի, գերեզմանների, մահարձանների, խաչքարերի, կոթողների, քանդուած ու ողջ կամուրջների մնացորդներից։ Միայն երեք գիւղերում հին Հայեր կան — Ղուշչի-Բլակ, Գնդեվազ, Արփա։ Վայոց ձորի թուրք բնակիչները երեք անգամ շատ են հայերից. առանց բացառութեան թուրքաց մօտ հարիւր գիւղերը շինուած են հին Հայոց գիւղատեղերում և առանց բացառութեան, կրկնում եմ, բոլոր թուրք գիւղերում կան Հայ-քրիստոնէական խիստ աչքի ընկնող յիշատակարաններ, որոնք ամեն տարի մաշւում են, նւազում են տակաւ առ տակաւ թուրքերի աւերիչ բրիչների տակ։ Ահա դնում եմ այստեղ մի քանիսը այդ թուրք գիւղերի անուններից, որոնց մէջ կան զարմանալի յիշատակարաններ. Ալաճազ—գրեթէ մի ամբողջ աւերակ քաղաք է, Մարաթուս, Ջիւլ, որ է ասում են Եղիշէի յիշած Յովսէփ կաթողիկոսի Հայրենիք Հողոցիմ գիւղը. Քեօշանլու, Ղարավանք, Ղաբախլու, Ամաղու, Ջատին, Ղոդուխ-վանք, Գեօղբաւր, Ախտաներ, Գեօմրի, Ձայքեանդ և այլ

շատ շատերը: Ոչ մի հնագիտական ընկերութիւն դեռ ուշադրութիւն չէ դարձրել սրանց վրայ:

Այսօր ձորի հայ գիւղերի մեծ մասը դեռ պանդխտութեան չէ դիմում. իսկ մի քանի գիւղերում, ուր սովորութիւն մտած է, մեծ ծաւալ է ստացել. օրինակ Փոռնից, Ազատակից, որ իւրաքանչիւրը հազիւ հարիւր տուն է, ամեն մէկից կուբանի շրջաններում կայ 250 պանդուխտ և իւրաքանչիւրից էլ կան մինչև 10—15 ընտանիքով գաղթածներ. դրանց մէջ գրեթէ արհեստաւոր չկայ. ամենքը շրջիկ մանրավաճառներ են, խանութների տէրեր և բուֆետ պահողներ, ամենքն էլ յաջողութեան մէջ են: Իսկ Ղուշչի—Բլակից, Հերհերից շատ գնում են Բագու. մնացած գիւղերը քիմրած կեցած են իրանց տեղում, պարապում են հողագործութեամբ, ոչխարապահութեամբ և սակաւ գիւղերում այգեպանութեամբ: Սրանց գիւղանտեսական հաստկացողութեան ստոր աստիճանին նայած՝ պանդխտութեան դիմելը անհրաժեշտ է: Քահանայական դասը շատ խղճալի է. սրանից 15—20 տարի առաջ եղել են բարեբարոյ, ժամասէր և եկեղեցական գրքերը լաւ սերտած քահանաներ. այժմ ուղղակի կարդալ չիմացող քահանաներ կան. ժամասացութիւն չկայ. հազիւ մի երկուսը կան ժամակարգութիւն իմացող և վարժութիւն ունեցող. զարմանալին այն է, որ ինչքան նոր է մի քահանայ, այնքան աւելի տգէտ է... Կոյրը կոյրին որ առաջնորդէ, երկուսն էլ կ'ընկնեն կորստի խորխորատի մէջ. ժողովուրդը կոյր, քահանան կոյր, սրա առաջնորդն էլ կոյր: Այդ կորուստի առաջն առնելու համար, հարկաւոր է լուսաւորչականութիւն, ուսում և նիւթական հարստութիւն. բարեպաշտ հարուստը պիտի փող տայ, Էջմիածինը պիտի անձնուէր ուսեալ քահանաներ պատրաստէ և իր հաշուով, ռոճիկով ամեն գաւառում մի օրինակելի կրթիչ—քահանայ պիտի պահպանէ, որոնք իրենց կողմից պիտի լուսաւոր յաջորդների և առաջնորդների օգնականներ լինեն: Դրա համար հարկաւոր է, որ ս. Էջմիածնում ս. Գրիգոր Լուսաւորչի անունով մի խոշոր անձեռնմխելի դրամագլուխ կազմւի կէս միլիօնից կամ մէկ միլիօնից, որի տոկոսով կարելի լինի մի-մի օրինակելի, ուսեալ կրթիչ քահանաներ պահել ամեն գաւառներում և շրջաններում, որոնք մի նոր կենդանութիւն կրտային մեր եկեղեցուն:

Ն. ԱՒԵՂՍՅ ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ

ԶԻԱՐՃԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Ղ. եպ. Չ.

12) Թէ տանըդ մէջ զիս պահես՝
Բերնիդ անուշ համ կուտամ,
Մի՛ գուցէ պոչըս կտրես՝
Յանկարծ ես կը դառնանամ։
Թէ պէտք լինի, պոչս ու գլուխս
Երկունքը մէկանց կտրէ,
Մընացածը գիտցիր որ
Ամեն մարդ կըգիրցունէ։

Առաջ. Նոյնի.

13) Երկու վանկով չորս գիրով
Ամենուն բերան կ'իյնամք,
Երկուքի բաժանելով
Հրամայական բայեր դառնամք։

Առաջ. Նոյնի.

14) Եօթը տառով շինուած եմք,
Աշխարհի կեանք կըբաշխեմք,
Գիւղացիին մանաւանդ
Հոգիին հետ կապուած եմք։
Երեք տառերս համաձայն՝
Կենդանութիւն տամք չորսին,
Չորսն ալ նոյնպէս միաբան՝
Հաց պատրաստեն ամենին։

Աստած տուաւ մեզ հրաման
Որ մենք լինիմք անբաժան,
Մարդն ալ քրտինք մեզ համար՝
Թափէ մինչև ցվախճան։

Առաջ. Նոյնի.

15) Ժամանակակից մի բառ գտէք՝ որ մէկ կողմէն կուի և մյուս կողմէն չափ սահմանէ՝ ամեն բան արդարութեամբ կըշռելու համար՝ և երկու հակառակներու հաւասար բաժին տայ։

Առաջ. Նոյնի.

16) Անուն մի եմ յոյժ սիրելի
Ամեն մարդու ալ հաճելի,
Սկզբնատառըս մի չնչեր,
Չայոց լինիմ ես ատելի։

Առաջ. Հայր. Բաբուրեանցի.

17) Ինչ էս փոքրիկ դեղեցիկ,
Ունքեր ունիմ նազելի,
Լեզուս բաց է, քնքուշիկ,
Ձեռներ երկար, շարժելի։
Ես դորձում եմ ամեն օր,
Անդադրում և անհանգիստ,
Ձարունակ գլոր-գլոր
Կեանքս կ'անցնէ այդպէս միշտ։
Վիճակիցս գոհ կըլինեմ
Եթէ դուք ինձ լաւ պահէք.
Եւ երբ տեսաք հիւանդ եմ՝
Խնդրեմ բժշկին դիմէք։
Բժիշկն ինձ լաւ քննելով
Երակներս կ'ամրացնէ,
Ու ինձ կրկին խայտալով
Իր առաջը կըվազացնէ։

ԸՌԱՁԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՅՑԱՏՐՈՒԹԻՒՆԵՐԸ

Լուծումն 5-րդ հանելուկի

Վեց տառերն իրենց միջին
Ինչո՞ւ այդպէս կուլին վիճին.
Ո՞վ կ՚ըսէ որ՝ թէ մամ չըլար
Թոռնիկն ինքնին կուգար աշխարհ։
Մագաղաթն ալ հին աւեններ,
Երբ Հայաստան թուղթ չըկար դեռ,
Չէ՞ որ շինուէր մորթէն ուլիճ
Ուր սուրբ գիրքեր կըգրուէին։
Բայց սին վէճերն օգուտ չունին,
Թող մեր եղբարք միաբանին,
Վեցն ըլլան մէկ, կազմեն մամուլ,
Կեանք, լոյս սփռեն աշխարհ անդուլ։

6-րդ հանելուկի

Անուշ ձայնով սոխակն եկեր
Կընուագէ քաղցրիկ երգեր,
Գալարեաց մէջ, իր ոտքին տակ
Կրկարկաչեն ագի ու առուակ։
Այս ամենը շատ սրտահաճ,
Սոխակին երգ, ջուրին կարկաչ.
Բայց ո՞ւրկէց արդեօք եկեր
Փափկիկ թռչնոյն գլուխն անցեր։
—Ձյս ալ անշուշտ խաղմ՚է բախտին
Որ արցունքներ խառնէ երգին։ Հ.

Պոլիս.

Հանելուկների բացատրութիւնը. 1) Քաղաք, քաղ, աղ, աղա-ք. 2) Վարդ-ան-ուշ. 3) Ամպերը. 4) Գաղեմ, Գեղամ, Ղամէգ 7) Գոմէշ. գոմ—էշ. 8) Պատիժ. իժ. 9) Սարդ. 11) Գրիչ։

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ

Типографія И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1 - 2.
Дозволено цензурою. Тифлисъ, 2-го мая 1898 года.

ԱՂԲԻՒՐԻ ՊՈՍՏԱՐԿՂ

Իմ սիրելի հասակակից ուբ - յնները տարեկան ընկերեներիս։

Ֆրխտոս յարեաւ ի մեռելոց

—

Ընորհաւոր լինի ձեր բոլորիդ Զատիկը։

Ես կըգրեմ ձեզ, թէ ինչպէս Զատիկն անցկացրի. տնղս եղանակն Թաղկազարդին շատ լաւ էր, մեբոնք բոլորս գնացինք եկեղեցի. եկեղեցին լիքն էր տիկիններով, օրիորդներով և մարդկանցով. իսկ թաթախման երեկոյեան եկեղեցի չըգնացինք, որովհետև շատ անձրևոտ էր և քամի, այնպէս որ հնար չըկար տնից դուրս գալ։ Միւս օրըձիւն եկաւ, էլի շատ ցուրտ էր, երկու-երեք օր այդպէս շարունակեց. Նոյն շաբթին՝ հինգշաբթի օրը, ես հրաւիրեցի ընկերներիս և շատ ուրախ ժամանակ անցկացրինք մեր տանը։ Հիւրերս էին մօրաքրոջս երեխայքը. Պերճուհին, Աշխէնը, Անահիտը, Թուգանը, Հրաչեան, Հայկը, Արամը, Տիգրանը։ Առաջի երեքը իմ դասընկերներն են, մէկ դասատան ենք, առաջի պատրաստականում, ռուսաց դպրոցում եկել էին ևս մօրաքրոջս երեխայքը. Եսթերը, Վարդանը և Հօրեղբօրս տղերքը. Թուբէնը, Դուրգէնը. այսքանս վաղուց պատրաստած էինք եղել նոյն երեկոյեան համար ներկայացում տալ. թեթև խաղ էր, երգեր մեր սովորած երգերից, հայերէն և ռուսերէն։ Կենդանի պատկերներ էլ ցոյց տւինք. «Վարդանիկը ու Սաթինիկը»՝ Հիւանդանոցում—պառկած հիւանդը, մօտը կանգնած գթացող քոյրը և բժիշկը, և ուսումնարանը, դասատան մէջ նստած աշակերտները։ Մօրաքոյրս՝ օրիորդ Համասփիւռը մեզ շատ օգնեց, պատրաստեց բեմը, վարագոյրը և ամեն ինչ՝ որ հարկաւոր էր։ Մայրըս հիւրասիրեց մեզ, տւաւ մեզ զանազան գոյնի ձու, քաղցր թըխւածք և ուրիշ ուտելիքներ. բոլորը վերջանալուց հիւրերը մնաք բարև ասեցին և գնացին։

Խնդրեմ դուք էլ, կարդացող փոքր աղջիկներ, գրեցէք, թէ ինչպիսի Զատիկ էք անցկացրել. ընդունեցէք բարևս.

Ձեր Քոյր Հեղինէ

Աղբիւր-Տարազի 1896 թ. Ալբոմ-Ալմանախը

Ո վ ա ճ դ ա կ ո ւ թ ի ւ ն

1 Վ ե հ ա պ ե տ ն ե ր

Նորին Օծութիւն Կաթողիկոս ամենայն Հայոց Մկրտիչ Ա.
Նորին Մեծութիւն թագուհի Մեծ-Բրիտանիայի Վիկտորիա։
Սուլթան Աբդիւլ Համիդ։

2 Ս. Վ ա յ ր ե ր

Ս. Էջմիածին. ընդհան. տեսարան։
Ս. Երուսաղէմ. Ս.Ստեփան. դուռը։
Վան. Ս. Վարագայ վանք։

3. Հայ բարձրաստիճան հոգեւորականներ Տաճկաստանի

Տ. Ներսէս պատրիարք Կ. Պոլսի։
Տ. Մ. արք. Իզմիրլեան Կ. Պոլսի. հրաժարեցեալ պատրիարք։
Տ. Գ. արքեպ. Ալէքսէեան Սսի և Կիլիկիայի Կաթողիկոս։
Տ. Խորէն արք. Լուսինեան-Գալֆայեան։
Տ. Ղևոն արքեպիսկոպոս Զիշմանեան, հրաժարեցեալ առաջնորդ Էրզրումի։
Տ. Գրիգորիս եպ. Յովհաննիսեան պատրիարք. Թեկնածու։
Տ Ներսէս Ծ. վ. Խարախանեան, աջակից Սրբազան Իզմիրլեանի։

4. Տաճկամոլ հոգեւորականներ

Խորէն եպիսկոպոս Աշրգեան, գահընկեց պատրիարք։
Բարդուղիմէոս Էֆէնդի Զամչեան նախ. պատրիարքակ. տեղապահ.

5. Քաղաքական գործիչներ

Իշխ. Լոբանով Րոստովսկի, ռուս. նախարտաքին գործերի մինիստր.
Իշխան Բիսմարկ, նախկին կանցլեր Գերմանիայի։
Կրիսպի, նախկին կանցլեր Իտալիայի։
Վ. Գլադստոն, նախկին նախարարապետ Անգլիայի։
Լորդ Սոլիսբիւրի, արդի նախարարապետ Անգլիայի։
Արգ այլ դուքս։
Լորդ Կիմբերլէյ։

Լորդ Բոզբէրրի, պարագլուխ ազատամիտ կուսակցութեան։
Ֆիլիպ Կէրրի, Կ. Պոլսոյ Անգլիացոց դեսպան։

6. Անգլօ-Հայկական ընկերութիւն

Ջէմս Բրայս, հիմնադիր Անգլօ-Հայկ. ընկերութեան։
Պրոֆ. Յակոբեան, նախկին նախ. Անգ-Հայկ. ընկերութեան։
Ստէֆէնսըն, այժմեան նախագահ Անգլօ-Հայկ. ընկերութեան։
Ջեան. փոխ-նախագահ Անգլօ-Հայ. ընկերութեան։

7. Տաճիկ բարձր ասպետաւորներ

Սայիդ-փաշա Քիւչուկ։
Քաւադ-փաշա, նախկին վիզիր։
Նազըմ-փաշա Նախ. ոստիկ. նախարար։
Իզզէթ-բէյ, Սուլթանի անձնական խորհրդական։
Զաքիր-փաշա, վերատեսուչ բարեկարգութեան և էրզրումի կոտորածը իրագործող։
Դերվիշ-փաշա, նախկին վիզիր։
Աբաս-փաշա, Եգիպտոսի խեդիւ։

8. Հայ փաշաներ եւ բարձր պաշտօնեաներ

Նուբար-փաշա Եգիպտոսի նախկին նախարարապետ։
Գաբրիել Էֆէնդի Նորատունկեան. Ք. Դ. իրաւագէտ խորհրդական։
Խասհակ-խան, Էրզրումում Պարսից հիւպատոս և կոտորածի ժամանակ պաշտպան հայերի։

9 Բարեսիրս կանայք

Տիկին Գլադստըն։

10 Հայրենասէրներ

Գարիբալդի։
Գամբէտտա։
Կոշուտ։

11 Նկարներ եւ տիպեր

Սարսափ. Հարեմում չար գուշակութիւն։
Հայ գաղթականներ։
Մի խումբ սասունցիներ։
Զէյթունցի հայուհիներ։
Թշւառներ (տանջանքերի նմուշների ալբոմից)
Տաճկաստանցի երեխայ։
Ձեռքերս կապած, ոտքերս շղթայ։
Վէլհէլմ-Թէլլ. Ֆլվլսարկի երկրպագութիւնն։
Եգիպտուհի։

12 Տրապարակագրներ

Դէյլին Արնոլդ, Daily Telegraph-ի խմբագրապետ։
Էմիլ Դիլոն, Daily Telegraph-ի թղթակից։
Ռոբինզոն, Daily News-ի խմբագր.
Վ. Մաքսինգ, Standard-ի խմբագր.
Մուրադ-բէյ Միզաճ լրագրի (կայիրէում) խմբագիր և երիտասարդ տաճիկ պարագլուխ։
Օ. Կ. Նոտովիչ, Новости լրագրի խմբագրապետ։
Ա. Ռշտունի, նախկին «Նեղոս» թերթի (Եգիպտոսում) խմբագիր։
Մ. Չերազ, L'Arménie լրագրի խմբագրապետ։
Տիկին Նովիկովա, Нов. Вр. Լոնդոնի թղթակից։

13. Տեսարաններ

Ս. Պետերբուրգ. Ձմերայնի պալատը։
Աննիչկով պալատը։ Մեծն Պետրոսի արձան։
Կ. Պոլիս. Բոսֆոր։ Այա-Սոֆիա։ Պերա։
Լոնդոն. Պարլամենտ։ Հայդ-Հայ փողոց։
Վեստմինստրի մայր տաճարը։ Բիւրեղեայ պալատը։
Հռոմ. Ս. Պետրոս եկեղեցին և նշաւոր հրապարակը։
Իսպանիա. Առիւծների պալատը։
Վենետիկ. Դոժերի պալատը։
Վիեն. Փինգի վրայի հոյակապ եկեղեցին։
Նիցցա. Գարիբալդու արձանը։
Տաճկաստան. Ձմիւռնիա։

14. Գեղարուեստի ներկայացուցիչներ

Ռաֆայէլ Մոցարտ։ Պատտի։ Ռուբինշտէյն։ Յովհ. Այվազովսկի։ Պետրոս Ադամեան։

15. Հայ գրականութեան ներկայացուցիչներ

Հ. Ղևոնդ Ալիշան։ Հ. Արսէն Բագրատունի։ Հ. Արսէն Այտընեան։ Մկրտիչ Պէշիկթաշլեան։ Խաչատուր Աբովեան։ Ստեփանոս Նազարեան։ Գրիգոր Արծրունի։ Ռափայէլ Պատկանեան։ Բաֆֆի։ Գերենց։

16. Գեղարուեստի ներկայացուցիչներ

Անմահութիւն։ Հանճարեղութիւն։ Նկարչութիւն։ Զոհաբերութիւն։ Յոյս։ Հաւատ։ Սէր։